ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ԳՍԳՆՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/12» ծածկագրով գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

«Գյումրու Սորբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա » ՓԲԸ 17.09.2026թ. ժամը 10:00

Ք. Գյումրի Անի թաղամաս 5փ. 8 շ.

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Նորիկյան

Հանձնաժողովի անդամներ՝ Անահիտ Բաղիշյան

Արմինե Կնյազյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տաթևիկ Խալաթյան

1.Ընթացակարգի հայտերի բացման և սկսելու մասին

(Տիգրան Նորիկյան)

10:00 –ին գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը համարեց բացված

1. **Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին**

Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլ փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հարցում է եկել հետևյալ բովանդակությամբ՝

Հարցադրում 1

Հարգելի Գործընկեր Խնդրում եմ տրամադրել պարզաբանում 23-րդ չափաբաժնի հետ կապված: Արդյոք Ձեզ համար ընդունելի կլինի մատակարարել էսգ սարք որի թերմալ թղթի չափսերն են Z fold :112mm×100mm/10m Շնորհակալություն համագործակցության համար

Պարզաբանում 1

Հարգելի հարցատու տեխնիկական բնութագրում հստակ նշված է թղթի չափսերը: Ընդունելի է միայն տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք:

Հարցադրում 2

Խնդրում եմ պարզաբանել, 36-րդ չափաբաժնում կափարիչ պահանջվում է թե ոչ: Եթե այո, խնդրում եմ կատարեք համապատասխան փոփոխությունը

Պարզաբանում 2

Հարգելի հարցատու այո կափարիչ պահանջվում է , կկատարվի համապատասխան փոփոխություն:

Հարցադրում 3

Հարգելի գործընկեր լոտ 6 ի համար գրված տեխնիկական բնութագրում առկա է կոդի/անվանման և բովանդակության հակասություն (անվանումը դրված է Ավտոռեֆրակտո-կերատոմետր, բայց պարամետրերը դիոպտրիմետրի են):Խնդրում եմ պարզաբանել իրականում ինչ է պետք:

Պարզաբանում 3

Հարգելի գործընկեր, տեղի է ունեցել մեխանիկական սխալ, կկատարվի հրավերի փոփոխություն:

Հարցադրում 4

Հարգելի գործընկեր խնդրում եմ պարզաբանել շտատիվի համար ինչ է նշանակում Երկարությունը՝ ոչ պակաս քան 30սմ Բարձրությունը՝ ոչ պակաս քան 5սմ Լայնությունը ՝ ոչ պակաս քան 5սմ Անիվների տրամագիծը ՝ ոչ ավելի քան 6սմ կանխավ շնորհակալ եմ:

Պարզաբանում 4

Հարգելի հարցատու գրված է 5 պլաստիկ ոտնակներով Երկարությունը՝ ոչ պակաս քան 30սմ Բարձրությունը՝ ոչ պակաս քան 5սմ Լայնությունը ՝ ոչ պակաս քան 5սմ Անիվների տրամագիծը ՝ ոչ ավելի քան 6սմ Հետևաբար Ձեր հարցը վերաբերվում է ոտնակներին:

2. **Ընտրված մասնակիցների հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ «Տեխնո-Մ» ՍՊԸ-ի, «Մեդթրեյդ»ՍՊԸ-ի, «Մեդիկա» ՍՊԸ-ի և «Հար Գրուպ 5» ՍՊԸ-ի**

- ***«Տեխնո-Մ» ՍՊԸ***-ի հայտու՝ ***Հավելված N1***-ում (դիմում հայտարարություն) սխալ է լրացված մրցույթի ծածկագիրը, ընթացակարգի պատվիրատուի անվանումը, չափաբաժինները , որոնց մասնակցել է ընկերությունը, ***Հավելված N1.3*** –ում (Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) մրցույթի ծածկագիրը սխալ է լրացված, ***Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում*** **29-րդ չափաբաժնի** համար բոլոր դաշտերը լրացված է նույնությամբ
- ***«Մեդթրեյդ» ՍՊԸ***-ի հայտու ***Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում*** բոլոր դաշտերը լրացված է նույնությամբ
- ***«Մեդիկա» ՍՊԸ***-ի հայտու ***Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի*** 6-րդ չափաբաժնում տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում տվյալ ապրանքին
- ***«Հար Գրուպ 5» ՍՊԸ***-ի հայտու՝ ***Հավելված N1***-ը (դիմում հայտարարություն) ստորագրված չէ, ***Հավելված N1.3-ը*** (Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր) ներկայացված չէ, ***Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերում*** ոչ մի դաշտ լրացված չէ

Առաջարկվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել նշված շտկումները և կցել համակարգ

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը տեղափոխվում է սույն թվականի սեպտեմբերի 22-ին ժամը 10:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Նորիկյան

Հանձնաժողովի անդամներ՝ Անահիտ Բաղիշյան

Արմինե Կնյազյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տաթևիկ Խալաթյան